

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՍՄԿԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆ Է

Ս. ԲԱԴԱՆՅԱՆ

Սովետական ժողովուրդը խորին զոհունակությամբ ընդունեց ՍՄԿԿ Կ կոմի 1982 թ. մայիսյան պլենումի՝ «Մինչև 1990 թվականն ընկած ժամա կաշրջանի ՍՍՀՄ պարենային ծրագրի և նրա իրականացման միջոցառում մասին» որոշումը:

ՍՄԿԿ XXVI համագումարն ընդգծեց, որ բնակչության պարենամատ րարման բնագավառում դեռևս գոյություն ունեցող դժվարությունները նեյու համար պետք է մշակել հատուկ պարենային ծրագիր, որը պետք է գանապես շաղկապի գյուղատնտեսության և դրան ապահովող արդյ րական ճյուղերի, գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպ փոխադրման ու վերամշակման, անողի արդյունաբերության և պարենա րանքների առևտրի զարգացման հարցերը: Պարենային ծրագիրը, նշվ մագումարում, «...պետք է ապահովի գյուղատնտեսական մթերքների դրույթյան զգալի ավելացում: Այն պետք է գյուղատնտեսությունը ավել տորեն միացնի այն ճյուղերի հետ, որոնք զբաղվում են գյուղատնտես մթերքների պահպանմամբ ու վերամշակմամբ, և, իհարկե, առևտրի հե կերպ ասած, այդ ծրագրի նպատակն է հնարավորին շափ ավելի սեղմ ժա ներում լուծել բնակչությանը մթերքների անխափան մատակարարման խնդր րը»¹:

Մշակելով պարենային ծրագիրը, կուսակցությունը ելնում է մարքայադ մենինիզմի կլասիկների այն հիմնարար դրույթից, որ սննդամթերքները միշտ եղել ու մնում են մարդկային կյանքի առաջին ու վճռական նախապայմանը: Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ սոցիալիստական պետությունը տնտեսական տեսակետից կարող է ամուր կանգնել սեփական ոտքերի վրա այն դեպքում միայն, եթե նա հանդիսանա պարենային բավարար ֆունդի փաստական տերը:

Կոմունիստական կուսակցության ագրարային քաղաքականությունը միշտ էլ նպատակամղել է պարենային հուսալի ֆունդի ստեղծման խնդրի լուծմանը: Հասկանալի է, որ ժողովրդատնտեսական այդ հրատապ խնդրի լուծման ուղի ներն ու մեթոդները սովետական հասարակության զարգացման տարբեր փու լերում որոշվել են երկրի կոնկրետ հնարավորություններով: Արդի փուլում մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի ՍՍՀՄ պարենային ծրագրի ընդունումն ու իրականացումը պայմանավորված է նրանով, որ այժմ մեր եր կիրն ունի արտադրողական ուժերի զարգացման բարձր մակարդակ, հզոր ու

¹ ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը, էջ 73:

առաջավոր ինդուստրիալ բազա և խոշոր ու մեքենայացված գյուղատնտեսու-
թյուն: Եվ նրանով, որ մեր երկրում կառուցված է զարգացած սոցիալիզմի հա-
սարակութուն, որի պայմաններում վառ կերպով դրսևորվում են նրա մեծ ա-
ռավելություններն ու հսկայական հնարավորությունները: Գրանք վկայում են
այն մասին, որ արդի ժամանակաշրջանում մեր երկիրը կարող է հաջողությամբ
լուծել սոցիալ-տնտեսական ու կուլտուրական շինարարության ամենաբարդ
խնդիրները: Այդ խնդիրների մեջ գլխավորը եղել ու մնում է մարդը, նրա հա-
մակողմանի և ներդաշնակ զարգացման նկատմամբ հոգատարությունը: Աշ-
խատավորների կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ խոշոր միջոցա-
ռումներ են իրականացվել վերջին երեք հնգամյակներում: Այսպես, աշխա-
տանքի վարձատրության մակարդակը աճել է գրեթե 2 անգամ, Սպառման հան-
րային ֆոնդերից բնակչության ստացված վճարումներն ու արտոնություններն
ավելացել են 2,8 անգամ, բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտնե-
րը բարձրացել են կրկնակի շափով, ավելի քան 160 միլիոն մարդ բարելավել
են իրենց բնակարանային պայմանները:

Աշխատավորների կենսամակարդակի բարձրացումը, որը կոմունիստա-
կուսակցության կարևորագույն ծրագրային պահանջն է, ձեռք է բերվել և
հետև էլ ձեռք կբերվի սոցիալիստական էկոնոմիկայի և դրա մի օրգանա-
պար կազմող գյուղատնտեսության հետագա զարգացման և արդյունա-
տույթի աճի հիման վրա:

ՍՄԿԿ կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումից հետո անցած տարիները,
որոնք նշանավորվեցին կոմունիստական ազրարային քաղաքականության նոր
փուլի սկիզբը, հանդիսացան սոցիալիստական գյուղատնտեսության նյութական
բազայի, նորացման ու զարգացման ժամանակաշրջան: Հետևողականորեն իրա-
կանացնելով կենտկոմի մարտյան պլենումում մշակված և հաջորդ պլենում-
ներում և ՍՄԿԿ XXIII, XXIV, XXV և XXVI համագումարներում հետագա զար-
գացում ստացած կուրսը, կուսակցությունը մեծ աշխատանք կատարեց գյու-
ղատնտեսական արտադրության վերելքն ապահովելու ուղղությամբ. գյուղա-
տնտեսության մեջ աշխատանքի էներգազինվածությունը աճեց ավելի քան
երեք անգամ, ոռոգելի և շորացված հողերի ֆոնդը ավելացավ 1,7 անգամ, երեք
անգամ աճեցին հանքային պարարտանյութերի մատակարարումները:

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի նորացման, պլանա-
վորման և տնտեսական խթանման կատարելագործման շնորհիվ երկրում զգա-
լիորեն ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը. 1965 թ.
համեմատությամբ երկրի բնակչության թիվը 35 միլիոնով ավելանալու դեպ-
քում էապես բարձրացավ սննդամթերքների սպառման մակարդակը:

ՍՄԿԿ կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումից հետո անցած ժամանակա-
շրջանում որակական ու քանակական զգալի փոփոխություններ են կատարվել
նաև մեր հանրապետության էկոնոմիկայի ազրոարդյունաբերական սեկտոր-
ում: Դա երևում է նրանից, որ գյուղատնտեսության հանրային սեկտորում
հիմնական արտադրական ֆոնդերը 1965 թ. համեմատությամբ աճել են 3,8 ան-
գամ: Գյուղատնտեսության էներգետիկ կարողություններն ավելացել են 2,2
անգամ: Զարգացել են հողերի քիմիացումն ու մեխորացումը: Գյուղատնտե-
սության համար հանքային պարարտանյութերի մատակարարումներն աճել են
2,8 անգամ, ոռոգելի հողատարածություններն ավելացել են ավելի քան 37 հա-
զար հեկտարով:

Տասներորդ հնգամյակում, յոթերորդ հնգամյակի համեմատությամբ, երկ-

րի գյուղատնտեսության համախառն արտադրանքն ավելացավ 50 տոկոսով: Հացահատիկի տարեկան միջին համախառն արտադրությունը 130 միլիոն տոննայից հասավ 205 միլիոն տոննայի, մսի արտադրությունը (սպանդային քաշով) 9,3 միլիոն տոննայից հասավ 14,8 միլիոն տոննայի, կաթինը՝ 64,7 միլիոն տոննայից 92,7 տոննայի, ձվինը՝ 28,7 միլիարդ հատից 62,1 միլիարդ հատի: Նշանակալի աճ ձևեր բերվեց պտուղ-բանջարեղենի արտադրանքի արտադրության աճի գործում: Գյուղատնտեսական արտադրանքի աճը հնարավորություն տվեց, 1965 թ. համեմատությամբ, երկրի բնակչության թիվը 35 միլիոնով ավելանալու պայմաններում էապես բարձրացնել բնակչության կողմից սննդամթերքների սպառման մակարդակը: Այդ ակնառու կերպով երևում է Հայկական ՍՍՀ օրինակով նաև Այսպես, 1980 թ., 1965 թ. համեմատությամբ, հանրապետության բնակչության թիվը 924 հազարով ավելանալու դեպքում, մսի և մսամթերքների մեկ շնչին ընկնող սպառումն աճեց ավելի քան 74 %-ով, կաթինը և կաթնամթերքներինը՝ գրեթե 59,5, ձվինը՝ ավելի քան 62, բանջարեղենինն ու բոստանային կուլտուրաներինը՝ 59,5, շաքարինը՝ ավելի քան 19, ձկնինը՝ 17,4, ձկանն ու ձկնամթերքներինը՝ 29,4 տոկոսով:

Սակայն, ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումը, մենք չենք բավարարվում ձևեր բերածով, չենք կարող շտեմնել, որ պարենային պրոբլեմը դեռ բնավ հանված չէ օրակարգից: Դա բացատրվում է նրանով, որ մեր երկրի զարգացման արդի փուլում դեռևս գոյություն ունի անհամապատասխանություն բնակչության դրամական եկամուտների աճի տեմպերի և պարենային ապրանքների աճի ավելացման տեմպերի միջև: Բնակչության դրամական եկամուտներն աճում են ավելի արագ, քան պարենի արտադրությունը, որի պատճառով սննդամթերքների պահանջարկը առայժմ դեռ առաջ է անցնում պարենի արտադրությունից: Նման հանգամանքը, հիմնական պարենային ապրանքների մանրածախ գների կայունության դեպքում, հանգեցնում է այդ ապրանքների ավելացմանը: Չպետք է մոռանալ նաև այն կարևոր փաստը, որ շնայած մեր երկիրը հասել է նրան, որ գյուղատնտեսական արտադրության աճը սիստեմատիկաբար առաջ է անցնում բնակչության աճից, սակայն սննդամթերքների պահանջարկը դեռևս առաջ է անցնում պարենի արտադրության աճից: Դրա պատճառը նաև այն է, որ վերջին ժամանակաշրջանում նվազել է երկրի ագրարային սեկտորում անմիջականորեն աշխատող մարդկանց թիվը և շեշտակիորեն աճել է քաղաքային բնակչությունը: Այդ երևում է նաև Հայկական ՍՍՀ քաղաքային և գյուղական բնակչության աճի տեմպերի հարաբերակցությունից: Բավական է ասել, որ միայն վերջին տասնհինգ տարում հանրապետության քաղաքային բնակչությունն աճել է 855,4 հազարով: Այդ ժամանակաշրջանում հանրապետության բնակչության ընդհանուր թվում գյուղական բնակչության բաժինը կրճատվել է՝ 44 տոկոսից հասնելով 34 տոկոսի:

ՍՍՀՄ պարենային ծրագրում մշակված են կոնկրետ միջոցառումներ՝ ապահովելու պարենամթերքի բոլոր տեսակների կայուն մատակարարումը բրնակչությանը, նկատելիորեն բարձրացնելու բարձրորակ մթերքների սպառումը և էապես բավարարելու սննդի կառուցվածքը: Այդ կապակցությամբ հիշատակենք մի քանի թվեր: Այսպես, ենթադրվում է հացահատիկի տարեկան միջին արտադրությունը տասներկուերորդ հնգամյակում հասցնել 250—255 միլիոն տոննայի, մսինը՝ 20—20,5 միլիոն տոննայի, կաթինը՝ 104—106 միլիոն տոննայի, բանջարեղենինը՝ 37—39 միլիոն տոննայի, պտուղներինն ու հատապտուղներինը՝ 14—15 միլիոն տոննայի: ՍՍՀՄ պարենային ծրագրի իրագործ-

ման ասպարեզում պետք է առավելագույն ավանդ ներդնի յուրաքանչյուր միութենական հանրապետություն: Յուրաքանչյուր միութենական հանրապետություն պարտավոր է ապահովել գյուղատնտեսական մթերքների արտադրության ու գնումների, ընդհանուր միութենական ֆոնդին դրանց մատակարարումների պլանների անվերապահ կատարումը:

Միութենական յուրաքանչյուր հանրապետություն պետք է եղած հնարավորություններն ու ռեզերվները համակողմանի օգտագործելու հիման վրա բարձրացնի գյուղատնտեսական արտադրության, սննդարդյունաբերության և ագրոարդյունաբերության կոմպլեքսի մյուս ճյուղերի արդյունավետությունը, այն հաշվով, որ առավելագույն փոխհատուցում ստանա առկա արտադրական ու տեխնիկական պոտենցիալից: ՄԱԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումն ընդգծեց, որ հանրապետությունների, երկրամասերի ու մարզերի կուսակցական ու սովետական մարմինները լիակատար պատասխանատվություն են կրում բրնակչությանը հուսալիորեն պարենամթերք մատակարարելու համար, և ամենից առաջ տեղերում այդ մթերքների արտադրությունը ավելացնելու հաշվին:

Մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի համար ՍՍՀՄ պարենային ծրագրի իրագործման ուղղությամբ սահմանվել են միութենական հանրապետությունների, այդ թվում նաև մեր հանրապետության հիմնական խնդիրները: Մեր հանրապետությունում տասնմեկերորդ հնգամյակում պետք է ապահովել խաղողի միջին տարեկան արտադրությունը 240—260 հազար տոննա, տասներկուերորդ հնգամյակում՝ 310—330 հազար տոննա, հացահատիկինը՝ համապատասխանաբար 310 հազար տոննա և 320—340 հազար տոննա քանակությամբ: Տասնամյակի ընթացքում հանրապետությունում բանջարեղենի և բոստանային կուլտուրաների արտադրությունը կավելանա 1,2 անգամ, պտուղներիը և հատապտուղներիը՝ 1,7 անգամ, կերի բոլոր տեսակներինը՝ 1,4 անգամ: Տասնմեկերորդ հնգամյակում մսի միջին տարեկան արտադրությունը (սպանդային քաշով) կհասնի 95 հազար տոննայի, տասներկուերորդ հնգամյակում՝ 120—122 հազար տոննայի, կաթինը՝ համապատասխանաբար 520 հազար տոննայի և 570—590 հազար տոննայի: Տասնամյակի ընթացքում շահագործման կհանձնվեն առևմազն 60 հազար հեկտար ոռոգովի հողեր և կչրարբիացվի 120 հազար հեկտար արոտավայր: Կմեծացվեն արդյունաբերության սննդի ճյուղերի կարողությունները, տասնամյակի ընթացքում 1,4 անգամ կավելացվի պտուղ-բանջարեղենի պահածոների պատրաստումը:

Կուսակցության ագրարային քաղաքականությունը ելնում է նրանից, որ պարենային ծրագրի կատարման գլխավոր ուղին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի հետագա զարգացումն ու կատարելագործումն է, որը հնարավորություն կտա հաղթահարելու արդյունաբերության ու գյուղատնտեսության տեխնիկական զինվածության մակարդակների միջև դեռևս գոյություն ունեցող տարբերությունը, այսինքն՝ գյուղատնտեսության տեխնիկական զինվածության մակարդակը հասցնելու արդյունաբերության մակարդակին: Պարենային ծրագրում մշակված են այդ կարևորագույն տնտեսական պրոբլեմի լուծման կոնկրետ ուղիները: Դրա համար նախատեսվում է գյուղատնտեսության մեջ հիմնական արտադրական ֆոնդերը ավելացնել գրեթե 1,5 անգամ, կոլտնտեսությունների և սովխոզների էներգետիկ կարողությունները՝ 1,6 անգամ, գյուղին հանքային պարարտանյութերի մատակարարումները՝ 1,7 անգամ: Ընթացիկ տասնամյակում կաճի տրակտորների, կոմբայնների և գյուղի համար նախատեսված մյուս մեքենաների արտադրությունը, կբարելավվեն

դրանց որակական բնութագրերը: Ազրոտարդյունաբերական կոմպլեքսը տասն-երկուերորդ հնգամյակում կատանա ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի գրեթե մեկ երրորդը: Ազրոտարդյունաբերական սեկտորին ցույց տրվող օգնությունն շնորհիվ 80-ական թվականների վերջին պետք է հիմնականում ավարտվի գյուղատնտեսության ժամանակակից, զարգացած նյութատեխնիկական բազայի ստեղծման սոցիալ-տնտեսական խնդրի լուծումը:

Պարենային ծրագրի իրագործման համար կարևոր նշանակություն ունի տնտեսական լծակների բանիմաց օգտագործումը: Պատահական չէ, որ ՄՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումն ընդգծեց, որ արդյունաբերական կոմպլեքսի զարգացման կառավարման ու պլանավորման մեթոդները և տնտեսավարման մեխանիզմը պետք է պայմաններ ստեղծեն բարձր արտադրողական աշխատանքի համար: Մենք այստեղ առաջին հերթին նկատի ունենք տնտեսական հաշվարկի, գնի, վարձատրություն և մյուս տնտեսական լծակների օգտագործման հարցեր:

Ինչպես հայտնի է, սոցիալիստական տնտեսավարման պահանջների իրականացման հիմնական տնտեսական ձևը միավորումների և ազրոտարդյունաբերական կոմպլեքսի ձեռնարկությունների գործունեության կազմակերպման տնտեսաշրջանային սկզբունքն է, որը խառնվում է հանրային արտադրության տնտեսական լծակների և խթանների օգտագործման վրա: Մայիսյան պլենումը նշեց, որ գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը անհնար կլինի առանց իսկական տնտեսական հաշվարկի համար կայուն տնտեսական պայմանների ստեղծման: Տնտեսական հաշվարկը պետք է լինի ոչ թե ձևական, այլ իսկական, որպեսզի չուսուրանչուր կոլտնտեսություն ու սովխոզ ոչ միայն փոխհատուցի գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ծախսերը, այլև ստանա շահույթ՝ արտադրության հետագա ընդլայնման ու կատարելագործման համար:

ՄՄԿԿ Կենտկոմի մայիսյան սպենումի-որոշման համապատասխան 1983 թ. հունվարի 1-ից բարձրացվել են խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, կաթի, հացահատիկի, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բանջարեղենի և մի շարք այլ մթերքների գնման գները: Դրա հետ միասին մտցվել են նաև գների հավելումներ այն արտադրանքի, որն իրականացվում է ավելի վատ պայմաններում, վնասով աշխատող ցածր շահութաբեր տնտեսություններում: Այդ նպատակների համար պետության ծախսերը կկազմեն տարեկան 16 միլիարդ ռուբլի: Բացի այդ, մեծացվում է պետության կողմից ցույց տրվող օգնությունը վնասաբեր կոլտնտեսություններին կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտների և ճանապարհների շինարարության ու պահպանման գործում: Նախատեսված է այս նպատակով ամեն տարի հատկացնել 3,3 միլիարդ ռուբլի: Վերջապես, կոլտնտեսությունների ֆինանսական դրության բարելավման համար նախատեսված է դուրս գրել բանկի վարկերի գծով նրանց պարտքը՝ 9,7 միլիարդ ռուբլի գումարով և ավելի ուշ ժամկետների տեղափոխել ավելի քան 11 միլիարդ ռուբլու չափով պարտքի մարումը:

Պարենային ծրագրի իրացման համար էական նշանակություն կունենա ազրոտարդյունաբերական սեկտորում բաշխման հարաբերությունների կատարելագործումը: Աշխատանքի վարձատրությունը պետք է սերտորեն կապված լինի փաստացի ստացված արդյունքի հետ, որը կխթանի աշխատողների անձնական նյութական շահագրգռվածությունը: Այստեղ գլխավորն այն է; որ յու-

րաքանչյուր աշխատավոր տեսնի, շոշափելիորեն զգա իր ծախսած աշխատանքի քանակի ու որակի և իր վաստակի միջև եղած ուղղակի, պարզ ու հասկանալի կապը: Այդ նպատակով նախատեսվում է կոլտնտեսություններում ու սովխոզներում լալնորեն ներդնել բրիգադային և կոլեկտիվ կապալը, որը պետք է օգտագործել՝ աշխատանքի և ռեսուրսների տնտեսման ավելի բարձր ցուցանիշների հասնելու համար: Կապալով աշխատող կոլեկտիվներում ուժեղանում է կապը վարձատրման և վերջնական արդյունքների միջև:

Պլենումը նշեց, որ գյուղատնտեսության աշխատողների աշխատանքի վարձատրության մեջ պետք է ավելի մեծ չափով հաշվի առնել բնակչության կան պայմանները: Բացի դրանից, սովխոզներում և մյուս պետական ձեռնարկություններում անասնապահության աշխատողների վրա տարածվում է աշխատանքի անընդհատ ստաժի համար հավելավճարներ տալու պայմանները: Միջին հաշվով 30 տոկոսով բարձրացվում են սովխոզների ղեկավար աշխատողների, մասնագետների և ծառայողների ռճիկները:

ՄՄԿԿ Կենտկոմի մալխսյան պլենումն առանձնակի ուշադրություն դարձրեց կոլտնտեսականների և սովխոզների բանվորների աշխատանքի բնամթերային վարձատրության դերի բարձրացման հարցի վրա: Պլենումը դատապարտեց այն երևույթը, որ վերջին ժամանակաշրջանում սկսվել է բացահայտորեն թերագնահատվել բնամթերային վարձատրության նշանակությունը: Դա բացասաբար է անդրադառնում կոլտնտեսականների և սովխոզների բանվորների շահերի վրա, թուլացնում է անձնական օժանդակ տնտեսության զարգացման բազան և սահմանափակում է կոլտնտեսային շուկայի հնարավորությունները: Այդ պատճառով էլ պարենային ծրագրով նախատեսվում է ընդլայնել աշխատանքի բնամթերային վարձատրության պրակտիկան:

ՄՍՀՄ պարենային ծրագրի արդյունավետ իրացման համար նախատեսվում է տասներկուերորդ հնգամյակում ապահովել անմիջականորեն կոլտնտեսություններում ու սովխոզներում գյուղատնտեսական մթերքների ընդունումը և դրանց փոխադրումը մթերող կազմակերպությունների տրանսպորտով: Պարենային պրոբլեմի լուծման գործում կարևոր նշանակություն ունեն անձնական օժանդակ տնտեսությունները: ՄՍՀՄ պարենային ծրագրում մեծ ուշադրություն է նփիրված անձնական օժանդակ տնտեսությունների զարգացմանը, որը զգալի նշանակություն ունի պետության պարենային ֆոնդի համալրման և պարենով բնակչության աճող պահանջմունքները բավարարելու գործում: «Սոցիալիստական գյուղատնտեսության հիմքը,— ասված է ՄՄԿԿ XXVI համագումարին տրված Կենտկոմի հաշվետվությունում,— եղել ու մնում են կոլտնտեսությունները և սովխոզները: Բայց դա ամենին չի նշանակում, թե կարելի է անտեսել անձնական օժանդակ տնտեսությունների հնարավորությունները: Փորձը վկայում է, որ նման տնտեսությունները կարող են էական նեցուկ լինել մսի, կաթի և մի քանի այլ մթերքների արտադրության գործում: Աշխատավորներին պատկանող այգիները, բանջարանոցները, թռչունները, անասունները մեր ընդհանուր հարստության մի մասն են»²:

Ընելով համագումարի այդ կարևոր ցուցումից, ՄՄԿԿ Կենտկոմի մալխսյան պլենումը պահանջեց, որ պետք է մեծացնել պետության, տեղական օրգանների, կոլտնտեսությունների և սովխոզների կողմից անձնական օժանդակ տնտեսություններին ցույց տրվող օգնությունը: Պլենումը միաժամանակ նշեց,

² ՄՄԿԿ XXVI համագումարի նյութերը, էջ 77

որ պետք է ավելի լրիվ օգտագործել նաև ձեռնարկութունների օժանդակ տրնտեսութունների հնարավորութունները, արդյունաբերական ձեռնարկութուններին և կազմակերպութուններին հատկացնել գյուղատնտեսական անհրաժեշտ հողատարածութուններ՝ օժանդակ տնտեսութունների ստեղծման համար:

Պարենային ծրագրի արդյունավետ իրացման համար կարևոր նշանակություն ունի ագրոարդյունաբերական կոմպլեքսի կառավարումը բարելավելու միջոցառումների կիրառումը: Առաջին անգամ ագրոարդյունաբերական կոմպլեքսը առանձնացվում է որպես պլանավորման և կառավարման ինքնուրույն օբյեկտ, որը հնարավորություն է ստեղծում ավելի լավ ու արդյունավետ ուղղակցելու տերիտորիալ, ճյուղային և ծրագրանպատակային պլանավորումը, որի հիմքում դրված պետք է լինի վերջնական արդյունքը՝ երկիրն անխափան պարենով մատակարարելու համար: Այդ գլխավոր նպատակին է ենթարկված ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում գյուղատնտեսության և դրա հետ կապված ճյուղերի կառավարման միասնական սիստեմի ստեղծումը: Դրանում կարևոր տեղ է գրավում ագրոարդյունաբերական միավորումների ստեղծումը, որը թույլ է տալիս վերացնելու գերատեսչական տարանջատվածությունը, ապահովում է կառավարման տերիտորիալ և ճյուղային սկզբունքների առավել ռացիոնալ զուգորդումը: Երջաններում, երկրամասերում, մարզերում և ինքնավար հանրապետություններում ստեղծվում են ագրոարդյունաբերական միավորումներ, իսկ միութենական հանրապետություններում և կենտրոնում՝ ագրոարդյունաբերական հանձնաժողովներ: Ագրոարդյունաբերական կոմպլեքսի կառավարման ու պլանավորման կազմակերպման ու կատարելագործման այդ օրգանները կոչված են ամրապնդելու ագրոարդյունաբերական կոմպլեքսի միջճյուղային կապերը, բավարարելու պլանավորումն ու մատակարարումը, հետևվողականորեն ներդնելու տնտեսական հաշվարկը, կիրառելու աշխատանքի կազմակերպման ու վարձատրման առաջադիմական ձևերը: Հասկանալի է, որ ագրոարդյունաբերական միավորումների կառավարման ձևերի կատարելագործումը էականորեն կախանի պարենային ծրագրի արդյունավետ իրագործմանը:

ՄՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան պլենումում (1982 թ.) ընկեր Ցու. Վ. Անդրոպովն ասաց. «Ամենքին հասկանալի է, որ պարենային ծրագրի իրականացումը մեկ տարվա գործ չէ: Բայց մենք պետք է ասենք նաև մի այլ բան՝ պարենային ծրագրի կատարումը չի կարելի ձգձգել: Ագրոարդյունաբերական կոմպլեքսի աշխատողները պետք է օրավուր մեծացնեն ջանքերը, աշխատեն այնպես, որ այդ խնդրի լուծմանը հատկացվող հսկայական միջոցները փոխհատուցում տան արդեն այսօր և է՛լ ավելի մեծ փոխհատուցում՝ վաղը»:

ՄՍՀՄ պարենային ծրագրի օրգանական մասն են կազմում գյուղի սոցիալական վերակառուցման ուղղությամբ մայիսյան պլենումի մշակած միջոցառումները, որոնք նպատակամղված են քաղաքի և գյուղի միջև դեռևս գոյություն ունեցող էական տարբերությունների վերացմանը:

Զարգացած սոցիալիզմի պայմաններում քաղաքը և գյուղը դարգանում են սոցիալ-տնտեսական միասնական հիմքի վրա: Սակայն այդ չի նշանակում, թե նրանց միջև վերացել է ամեն մի տարբերություն: Քաղաքի և գյուղի արտադրողական ուժերի զարգացման և արտադրական հարաբերությունների հասունության ոչ միատեսակ մակարդակը պայմանավորում է նրանց միջև տրնտեսական, սոցիալական և կուլտուր-կենցաղային մակարդակների դեռևս պահպանվող էական տարբերությունների գոյությունը: Քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների վերացումը կապված է ինչպես

սոցիալ-տնտեսական, այնպես էլ կուլտուր-կենցաղային բարդ պրոբլեմների լուծման հետ: Այդ ենթադրում է գյուղում սոցիալ-տնտեսական հարաբերությունների կատարելագործման իրականացում, արտադրողական ուժերի զարգացման բարձր մակարդակի ձեռքբերում:

Արդի ժամանակաշրջանում քաղաքի և գյուղի միջև սոցիալ-տնտեսական ու կուլտուր-կենցաղային էական տարբերությունների հաղթահարմանն է ուղղված կուսակցության տնտեսական քաղաքականությունը: Պատահական չէ, որ գյուղի սոցիալական վերակառուցման պրոբլեմը կազմում է երկրի պարենային ծրագրի մի անկապտելի մասը:

Սովետական գյուղի տնտեսական վերափոխման բնագավառում կատարվել են արմատական տեղաշարժեր: Գյուղում հաստատվել են սոցիալիստական արտադրական հարաբերություններ: Գյուղատնտեսական արտադրության արտադրողական ուժերի զարգացման և ինդուստրացման համեմատ խոր փոփոխություններ են տեղի ունեցել կոլտնտեսային գյուղացիության կյանքում: Նրա աշխատանքն աստիճանաբար մերձենում է բանվորների աշխատանքին, դառնում ինդուստրիալ աշխատանքի այլատեսակը: Այսինքն, փոխվում է հենց իր՝ ագրարային աշխատանքի բնույթը, նա ավելի մեծ չափով ձեռք է բերում ինդուստրիալ աշխատանքի բնույթ:

Գյուղի սոցիալական կառուցվածքի վրա մեծ ազդեցություն է գործում սոցիալիստական սեփականության երկու ձևերի՝ համաժողովրդական (պետական) և կոլտնտեսային-կոոպերատիվ ձևերի մերձեցումը, միջտնտեսական կազմակերպությունների զարգացումը, որոնց մասնակցում են կոլտնտեսությունները և պետական ձեռնարկությունները: Կարևոր նշանակություն ունեն նաև կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման, վարձատրության ձևերի փոփոխությունները, կոլտնտեսականների վրա բանվորների ու ծառայողների համար սահմանված սոցիալական ապահովության սիստեմի տարածումը: Այդ ամենը նպաստում է քաղաքի և գյուղի, բանվորների և կոլտնտեսային գյուղացիության սոցիալական դրույթյան միջև եղած տարբերությունների վերացմանը, Իհարկե, դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, որ մեզանում դեռևս քիչ չեն ետ մնացող կոլտնտեսությունները, քիչ չեն այն գյուղերը, որոնք կարիք ունեն սոցիալական վերակառուցման, նորացման ու բարեկարգման: Առանց դրան, ինչպես նշեց ՍՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումը, անհնար է հասնել գյուղում աշխատավորական կայուն կոլեկտիվների ստեղծման, պարենային ծրագրի իրագործման համար գյուղում ստեղծված արտադրական պոտենցիալի արդյունավետ օգտագործման:

ՍՄԿԿ XXVI համագումարին տրված Կենտկոմի հաշվետվության մեջ ասված է. «Եեռ շատ ջանքեր ու միջոցներ կպահանջվեն գյուղում կյանքի կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու, քաղաքի և գյուղի միջև եղած տարբերությունները հաղթահարելու համար»³: Գյուղի սոցիալական վերակառուցումը պահանջում է բարձրացնել գյուղական աշխատանքի հեղինակությունը, ակտիվորեն մտցնել աշխատանքի և հանգստի ուղիները՝ ղեկավարելով:

Սոցիալիստական շինարարության տարիներին գյուղի սոցիալական զարգացման գործում քիչ բան չի արված: Խոր փոփոխություններ են կատարվել սովետական գյուղացու կյանքի և աշխատանքի պայմաններում: Բարձրացել է աշխատողների նյութական ու կուլտուր-տեխնիկական մակարդակը: Բնորոշ

³ ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը, էջ 85—86:

այն է, որ ներկայումս գյուղի աշխատող բնակչության երեք քառորդն ունի բարձրագույն և միջնակարգ (լրիվ և ոչ լրիվ) կրթություն, մինչդեռ 1939 թ. նման կրթություն ունեւր գյուղացիների 6 %-ը միայն: Կոլտնտեսություններում ու սովխոզներում աճել են բազմազան մասնագիտությամբ բարձր որակավորում ունեցող կադրեր: Հատկապես նկատելի է գյուղի սոցիալական զարգացման արագ տեմպը վերջին երեք հնգամյակներում: Ավելացել է աշխատանքի վարձատրությունը, բարձրացել են կոլտնտեսությունների և սովխոզների աշխատողների կենսաթոշակները, աճել են նրանց ուսուցիչականությունը: Լայն շահեր է ընդունել բնակարանների և կուլտուր-կենցաղային օբյեկտների շինարարությունը: Միայն 1966—1980 թվականներին գործնականորեն յուրաքանչյուր երկրորդ ընտանիք բարելավել է բնակարանային պայմանները: Սակայն դրա հետ միասին այդ ուղղությամբ առաջիկայում դեռևս մեծ աշխատանք է սպասվում: Չնայած նրան, որ կրճատվում է քաղաքի և գյուղի միջև կուլտուր-կենցաղային ապահովվածության ճեղքվածքը, բայց դեռևս դյուրը նկատելիորեն ետ է մնում քաղաքից: Դա բացատրվում է նրանով, որ մի շարք տարիների ընթացքում գյուղատնտեսության մեջ ստեղծված եկամտի զգալի մասը ուղղվում էր համաժողովրդական խնդիրների լուծման նպատակին: Քաղաքի կուլտուր-կենցաղային ինֆրակառուցվածքի ստեղծման ուղղությամբ բնակչության մեկ շնչի հաշվով ամբողջական ծախսերը էականորեն գերազանցում էին գյուղի վրա կատարվող համանման ծախսերից: Դա չէր կարող չազդել գյուղում կուլտուրայի, լուսավորության, առողջապահության, կենցաղային ու կոմունալ սպասարկումների ձեռնարկությունների շինարարության տեմպերի վրա: Այդ դրույթները ուժեղացնում էր գյուղական բնակչության հոսքը դեպի քաղաք, որը զգալի չափով բարդացնում էր կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատանքային կայուն կոլեկտիվների ձևավորման պրոբլեմը:

ՄՄԿԿ XXVI համագումարը և Կենտկոմի մայիսյան պլենումը, սովետական հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող փոփոխությունների համակողմանի վերլուծության հիման վրա, մշակել են նոր մոտեցում գյուղի սոցիալական պրոբլեմների լուծման նկատմամբ: Դրա էությունը հանգում է նրան, որ գյուղի սոցիալական վերակառուցման պրոբլեմի լուծման համար պետք է նրանում առաջանցիկ տեմպերով իրագործել բարեկարգ բնակելի տների շինարարությունը, տնտեսական կառուցումների, դպրոցների, մանկական նախադպրոցական հիմնարկների, ակումբների և կուլտուր-կենցաղային նշանակության օբյեկտների կառուցումը:

ՄՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումը, որը կտրուկ շրջադարձ կատարեց դեպի գյուղ, միաժամանակ զգալի տեղ հատկացրեց գյուղական շինարարության զարգացմանը: Պլենումի որոշումներից հետևում է, որ գյուղի սոցիալական վերակառուցման միջոցառումները պետք է ուղղված լինեն գյուղական բնակավայրերի հետագա վերափոխման, բարեկարգ ավանների, բնակարանային, կոմունալ և կուլտուր-կենցաղային շինարարության ծավալի զգալի մեծացման նպատակին: Գյուղում բնակարանային շինարարության, դպրոցների, մանկական նախադպրոցական հիմնարկների, ակումբների կառուցումն ընդլայնելու, գյուղական բնակչության բժշկական, առևտրական և կենցաղային սպասարկումը բարելավելու նպատակով 80-ական թվականներին նախատեսվում է հատկացնել 160 միլիարդ ռուբլի: Մայիսյան պլենումն ընդգծեց, որ դա ոչ միայն մեծ թիվ է, այլև մեծ քաղաքականություն, որի նպատակն է քաղա-

քի և գյուղի միջև էական սոցիալական տարբերությունների վերացումը: Դա ուղղված է մեր ծրագրային պահանջներից մեկի կենսագործմանը:

Գյուղի սոցիալական վերակառուցման պրոբլեմի լուծման գործում էական նշանակություն ունի ճանապարհաշինարարությունը: Մայիսյան պլենումի որոշմամբ նախատեսվում է գյուղական վայրերում կառուցել 130 հազար կիլոմետր ավտոմոբիլային և 160 հազար կիլոմետր ներտնտեսական ճանապարհ: Ծանապարհներն ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալ-կուլտուրական նշանակություն: Դրանք ուժեղացնում են կուլտնտեսությունների և սովխոզների կապերը արդյունաբերական կենտրոնների հետ, գյուղը մոտեցնում են քաղաքին և թույլ են տալիս փոքրիկ բնակավայրերի բնակչությանը՝ օգտվելու քաղաքի կուլտուրայի ու կենցաղի հիմնարկներից: Ծանապարհային բարեկարգ ցանցը պայմաններ է ստեղծում արտադրության ինտենսիվացման բարձրացման, աշխատանքային ու նյութական ռեսուրսների խնայողության համար:

Գյուղատնտեսական արտադրության տրանսպորտային ծառայության կատարելագործումը բխում է աշխատանքի բաժանման պրոցեսի արագացման և ագրոարդյունաբերական ինտեգրացիայի զարգացման պահանջներից: Ավելին՝ դա պայմանավորվում է ինչպես գյուղատնտեսության ներսում, այնպես էլ ագրոարդյունաբերական կոմպլեքսի մյուս ոլորտների միջև արտադրական կապերի բարդացմամբ և զարգացման պահանջով: Դրանցից կարևորներն են՝ գյուղատնտեսության արտադրանքի վերարտադրության գործում տրանսպորտի դերի ուժեղացումը, ապրանքափոխադրումների ծավալի հարաբերական ու բացարձակ աճը: Վերջապես, դա բխում է, տնտեսությունների տեղադրումից անկախ, նրանց միջև վերարտադրության տարբեր պայմանների համահարթման անհրաժեշտությունից և այլն: Այդ ամենը ցույց է տալիս, որ արդի ժամանակաշրջանում տրանսպորտ-ճանապարհային սիստեմը դառնում է գյուղի սոցիալական զարգացման կարևոր գործոնը, գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր ուղղություններից մեկը:

ՄՄԿԿ Կենտկոմի մայիսյան պլենումի և ամբողջ սովետական ժողովրդի ջերմ հավանությանն արժանացած պարենային ծրագիրը և դրա կատարումը վճռական դեր կկատարեն մեր երկրում կոմունիզմի կառուցման սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծման գործում:

С. А. БАДАЛЯН — Продовольственная программа как составная часть экономической стратегии КПСС. — Решением Майского пленума ЦК КПСС 1982 г. была принята продовольственная программа СССР за период до 1990 г. Кратко характеризуя принятую продовольственную программу, автор статьи отмечает, что ее претворение в жизнь обеспечивает более высокий уровень удовлетворения потребностей общества в сельскохозяйственной продукции, а также устранение существенных различий между городом и деревней. Важная роль в решении этих задач отводится агропромышленным объединениям, дальнейшему развитию личных подсобных хозяйств, усовершенствованию организации и оплаты труда.